տեղ կարես՝ կե՛ր, եւ զորն չուտես դնեն մախրամատ, հետ տար. ամէն լօխման ուտուզ մի կ՚աժէ. եւ յետ կերակրոյն չէքէրլէմէնի եւ գնոց հալվանի տան, քաղցր եւ անուշ. դդալն, դանակն, դարսիքն եւ այլն ամէն արծաթեղէն է: Բայց հայուն տուտէ՛ պատիւ կ՚առնեն եւ ի գլուխ տեղ նստեցուցանեն:

Երկրորդ ողորմութիւնն. զի ամէն դուրս ելնելու տամաթ է որ ԻԸ զուռուշ բաշխեն աղքատաց. զի թէ հեռու երթայ՝ ի մաֆայ նստի, երկու ջորի լծած, մինն առաջ եւ միւսն յետին. եւ վեց ջորի սպիտակ. վեց եաքնետակ. վրանին կարմիր մախմուր ձգած մինչեւ ի գետին. եւ ինքն ալ կարմիր կու հագնի. եւ իւր բոլորն շուրջանակի այլ զինուորք չի մօտենան. միայն ալամանքն մօրվօք որ են տուտէչք[1], զոր ասեն թէ Լուսաւորիչն եթող:

Երրորդ ողորմութիւնն Փափին, որ ամէն տարի Ծ հոգի պիտոր կարգէ յարանց եւ կանանց, իգին ճիէզ եւ մայեա. արուին՝ սէրմիայ, մարդուն կօրա. ոմանց Ճ զուռուշ, ոմանց Ծ կամ աւելի եւ պակաս: Եւ ամէն վանից ալ սահմանք է, որ կարողութեան կօրա պիտոր կարգեն Ծ կամ Կ կամ այլ աւելի որբ աղջիկ եւ վախիր կորիճնի. զի յաշխարհն այն աղջիկն շատ է եւ մարդն սակաւ. վասն որոյ պիտոր շատ ճիհէզ տան, թէ չէ մարդ

102 դքալն: — 121 կարօղութեան:

[1] Այսինքն tedeschi: